# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
## ՈՐՈՇՈՒՄ

N 293-Ա 10 հունիսի 2024 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԾՈՎԱՍԱՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 9-րդ, 12-րդ և 17-րդ կետերի պահանջները

որոշում եմ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2024 թվականի հունիսի 11-ին՝ ժամը $11^{00}$-ին, մրցույթն անցկացնող մրցութային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Ջանիկ Բազեյանին, քարտուղար՝ Մերի Խաչատրյանին:

10.06.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք.Գավառ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2024 թվականի հունիսի 10 -ի
N 293 -Ա որոշման

# Կ Ա Զ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԾՈՎԱՍԱՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | |
|---|---|
| Ջանիկ Բազեյան | -Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ |
| Մերի Խաչատրյան | -Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար |
| Լուսինե Վարդանյան | -Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ |
| Կարինե Գաբրիելյան | -Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հանրային առողջության բաժնի պետ |
| Հասմիկ Հարությունյան | -Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Գեղարքունիք» մասնաճյուղի տնօրեն |
| Մարգարիտա Մարգարյան | - Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ |
| Անժելա Բուդոյան | - Հայկական հոգեբուժական ասոցիացիայի անդամ |

10.06.2024

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049